ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

№ 0287-2023 «11» 04 2023թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ավանեսյան,

Ի պատասխան 07.04.2023թ. թիվ 03/26-1/6744-2023 գրության հայտնում եմ հետևյալը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը (պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը) չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում:

Տվյալ դեպքում գնման գինը կազմում է 150 000 ՀՀ դրամ, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված իրավակարգավորումն, այն մասին, որ մասնակիցը չի ներառվում նշված ցուցակում, եթե հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, կիրառելի չէ:

Ելնելով վերոգրյալից՝ կրկին ուղարկվում է Ա/Ձ Ալեքսան Դավիդի Միքայելյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 10.02.2023թ. թիվ 60-Ա որոշումը և անհրաժեշտ տվյալները՝ Ձեր կողմից ներկայացված ձևաչափին համապատասխան.

0023, ք. Երևան, Արշակունյաց պող. 23,
հեռ.՝ (010) 44 11 36, ֆաքս՝ (010) 58 15 74,
թեժ գիծ՝ (010) 30 00 11,
էլ. կայք՝ justexpert.am, էլ. փոստ՝ info@justexpert.am

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
Ա/Ձ Ալեքսան Դավիդի Միքայելյան	ՀՎՀՀ 28112687	ք.Երևան, Հաղթանակ 10 փող. Տուն 14	√			10.02.2023թ.

Առդիր՝ 4 ֆայլ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆ ԴՂՈՒԼՅԱՆ